ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 190-Ա « 24 » հունվարի 2023 թ.

ԲԱԳՐԵՎԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ Հ.88/6 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել «Նոյ Հաուս» ՍՊԸ-ի լ/ա Գագիկ Ղուկասյանի դիմումը՝ Բագրևանդի փողոցի հ.88/6 հասցեում գտնվող հողամասի սահմանները ճշտելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 31.05.2021թ. հ.31052021-01-0303 /գաղտնաբառ՝ UXXNNYSB2Z4H/ վկայականը, ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի առանձին որակական քանակական բնութագրերի և դրանց նկատմամբ առանձին իրավունքների /սահմանափակումների/ վերաբերյալ 20.05.2022թ. հ.ԱՏ-20052022-01-0524 տեղեկանքը, ՀՀ կադաստրի կոմիտեի՝ գույքի նկատմամբ իրավունքի /սահմանափակման/ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 05.11.2021թ. Կ-05112021-01-0145 որոշումը:

Տարածքի տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ քննարկվող հասցեում գտնվող հողամասի փաստացի մակերեսը կազմում է 627.5քմ, ինչն ամրագրված է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.31052021-01-0303 վկայականում:

Քննարկվող հողամասը համապատասխանում է հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1, 2 և 3 կետերի պահանջներին, ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում և ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի հ.1023-Ն որոշման հավելվածների համաձայն՝ ըստ տարածագնահատման համաձայնեցման սխեմայի գտնվում է Երևան քաղաքի հողերի տարածագնահատման 7-րդ գոտում:

ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 15-ի հ.2330-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի պայմանական նշաններով՝ հողամասը բնակավայրերի նպատակային նշանակության խառը կառուցապատման գոտում է, որն իր մեջ ներառում է և բնակելի և հասարակական կառուցապատում՝ ընդհանուր օգտագործման տարածքների հավասարաչափ համադրությամբ:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 25.08.2022թ. և 23.12.2022թ. հ.Ն/44259-22 եզրակացությունները.

1. Սահմանել, որ Բագրևանդի փողոցի հ.88/6 հասցեում գտնվող, «Նոյ Հաուս» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հողամասի սահմանները որոշվում են 627.5քմ մակերեսով սահմանված կարգով հաստատված հատակագծով:

2. Սույն որոշումից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

X

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Signed by: SARGSYAN HRACHYA 2302850092 **ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ**